

Մանկավարժություն և դասավանդման մեթոդիկա

Մարիամ Աղամյան

Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարան դասախոս,
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էլ. huugte՝ mariam@leadavenue.com

DOI: 10.53614/18294952-2025.2-234

«ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԲՈՒՀԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն հոդվածը նվիրված է բարձրագույն կրթության մեջ «Միջմշակութային հաղորդակցություն» առարկայի դասավանդման մեթոդական և գործնական մոտեցումների ուսումնասիրությանը: Գլոբալացման և մշակութային բազմազանության պայմաններում ուսանողների միջմշակութային կարողությունների զարգացումը անհրաժեշտ նախապայման է նրանց անձնական, ակադեմիական և մասնագիտական կայացման համար: Հոդվածում ներկայացվում են դասավանդման արդյունավետ մոդելներ, ներառական և հարգալից ուսումնական միջավայրի ձևավորման կարևորությունը, ինչպես նաև միջազգային փորձի փոխանակման ծրագրերի դերը հաղորդակցական և մշակութային հմտությունների խորացման գործում: Առաջարկվող մոտեցումները նպատակ ունեն պատրաստելու ուսանողներին բազմամշակութային միջավայրում հաջող համագործակցության՝ խթանելով հանդուրժողականությունը, հարմարվողականությունը և փոխըմբռնումը:

Հիմնաբառեր: Միջմշակութային հաղորդակցություն, բարձրագույն կրթություն, միջմշակութային կարողություններ, դասավանդման մեթոդներ, մշակութային բազմազանություն, ներառական միջավայր, միջազգային փոխանակում, հարմարվողականություն, հանդուրժողականություն:

Ներածություն

21-րդ դարը ձևավորվում է համաշխարհայնացման, մշակութային բազմազանության և գիտակրթական համագործակցության խորացող միտումներով: Այս համատեքստում միջմշակութային հաղորդակցությունն այսօր դարձել է ոչ միայն ժամանակակից հասարակության հիմնարար պահանջ, այլ նաև կրթության ոլորտի անբաժան բաղադրիչ: Հատկապես բարձրագույն ուսումնական հաստատություններում այն ձեռք է բերում կենսական նշանակություն, քանի որ ուսանողները սովորում են մշակութային, լեզվական և սոցիալական տարբեր միջավայրերից եկած համակուրսեցիների հետ կամ պատրաստվում են աշխատել բազմազգ ու բազմամշակութային կազմակերպություններում:

Այս իրադրությունը պահանջում է կրթական նորարարական և ճկուն գործընթաց, որտեղ կշեռտադրվեն այնպիսի արժեքներ, ինչպիսիք են մշակութային հարգանքը, փոխըմբռնումը, համբերատարությունը և հարմարվողականությունը: Բացի այդ, ուսանողների մեջ անհրաժեշտ է ձևավորել հաղորդակցական այնպիսի հմտություններ, որոնք թույլ կտան արդյունավետ համագործակցել մշակութային տարբերություններ ունեցող անձանց հետ՝ խուսափելով բխումներից, ձևավորելով փոխադարձ վստահության հիմք: Իսկ ինչ է նշանակում «մշակութային տարբերություն» եզրույթը: Ինչպես նշվում է *Միջմշակութային կարողությունների գնահատում* (INCA) նախագծում՝ մշակութային տարբերությունները վերաբերում են ոչ միայն ազգային պատկանելությանը, այլև այն արժեքներին և հավատալիքներին, որոնցով անհատը դաստիարակվում և մեծանում է (2006): Բացի մշակութային արժեքներից և հավատալիքներից, տարիքային հասկացողության տարբերությունները ևս կարող են ձևավորել ուսանողների հաղորդակցման տարբեր հմտություններ: Ամբողջ աշխարհում տարիքին վերաբերող հասկացություններն ունեն լեզվական ու մշակութային բազում արտահայտություններ: Օրինակ՝ հայերենում տարիքը հաճախ արտահայտվում է հարգանք, հեղինակություն և սոցիալական դիրք ցույց տվող միավորներով: Այստեղ օգտագործվում են այնպիսի միավորներ, ինչպիսիք են «տիկին», «տեր», կամ «զավակ» և «տղա» բառերը, որոնք արտացոլում են տարիքային և սոցիալական դիրք, հեղինակություն (օր. «Տեր Հովհաննես», «Տիկին Մարիամ»): Անգլերենում տարիքային հասկացությունը ավելի շատ ֆիզիկական տարիքի, կենսափորձի և զարգացման փուլերի դիտանկյունից է ընկալվում, և հաճախ օգտագործվում են բառեր, որոնք առանձնացնում են միայն տարիքի շերտերը, օրինակ՝ «child», «teenager», «adult», «senior», հաճախ առանց սոցիալական դիրքի ակնառու նշանակության: Այս լեզվաբանական տարբերությունները կարող են ազդել ուսանողների միջև հաղորդակցության ձևերի վրա, երբ նրանք փորձեն հասկանալ և ընդունել տարիքային առանձնահատկությունները տարբեր մշակույթների համատեքստում: Հետևաբար, կարելի է ասել, որ «մշակութային տարբերություն» հասկացության ըմբռնումը և հաղորդակցական ճկունության ձևավորումը դառնում են բարձրագույն կրթության կարևոր բաղադրիչներ: Ըստ միջմշակութային կրթության ոլորտի առաջատար փորձագետ ամերի-

կացի Դ. Դիարդորֆի՝ միջմշակութային հաղորդակցական կարողությունները պետք է դիտարկվեն որպես կրթական համակարգի կարևորագույն բաղադրիչ՝ նպաստելով ուսանողների անձնական և մասնագիտական կայացմանը (Deardorff, 2006, էջ 27):

Մեթոդ

Սույն հոդվածը նպատակ ունի ներկայացնելու մեթոդական հիմնավորված մոտեցումներ, որոնք կարող են նպաստել «Միջմշակութային հաղորդակցություն» առարկայի արդյունավետ դասավանդմանը բարձրագույն ուսումնական հաստատություններում: Այդ նպատակին հասնելու համար հոդվածում կիրառվել են ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական մեթոդները: Որպես տեսական հիմք է ներկայացվել միջմշակութային հաղորդակցության վերաբերյալ ժամանակակից հետազոտական գրականությունը, մասնավորապես՝ լեզվաբանական, հոգեբանական և մանկավարժական տեսությունները: Վերլուծությունն իրականացվել է ինտեգրատիվ մեթոդաբանությամբ՝ համադրելով տարբեր հեղինակների մոտեցումները և բարձրագույն կրթության ոլորտում դասավանդման կիրառական փորձը: Այս մեթոդաբանական հիմքը հնարավորություն է տալիս բացահայտելու ոչ միայն տեսական հիմնավորումները, այլև գործնական կիրառման ուղիները միջմշակութային հաղորդակցության դասավանդման ժամանակ:

Արդյունքներ և քննարկում

«Միջմշակութային հաղորդակցություն» առարկան իր էությամբ և բովանդակությամբ ուղղված է ուսանողների մեջ ոչ միայն տեսական գիտելիքների ձևավորմանը, այլև գործնական և կիրառական կարողությունների զարգացմանը: Դասընթացի ընթացքում ուսանողները պետք է հասկանան, թե ինչպես է մշակույթը ձևավորում մարդու աշխարհընկալումը, վերաբերմունքը և հաղորդակցության ձևերը՝ ինչպես անձնական, այնպես էլ մասնագիտական կյանքում: Հատկապես կարևոր է, որ ուսանողները կարողանան տեսական հասկացությունները փոխկապակցել կյանքի կոնկրետ իրավիճակների հետ, որոնք կարող են հանդիպել նրանց ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Դասընթացի հիմնական նպատակներն են՝

1. Ներկայացնել մշակույթի և հաղորդակցության հիմունքները, որտեղ ուսանողները կուսումնասիրեն մշակույթի բաղադրիչները, հաղորդակցության տեսակները և դրանց փոխկապակցվածությունը:

2. Ստեղծել գիտակցում մշակութային տարբերությունների մասին, այսինքն՝ ձևավորել այնպիսի ընկալում, որի շնորհիվ ուսանողները կկարողանան տեսնել մշակույթների միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները՝ ոչ թե դատապարտելով դրանք և խուսափելով դրանցից, այլ փորձելով հասկանալ և ընդունել:

3. Զարգացնել հարգալից ու արդյունավետ հաղորդակցման

հմտություններ, որոնք թույլ կտան ուսանողներին հաղորդակցվել բազմա-
շակութային միջավայրերում՝ պահպանելով հարգանքը մյուսների մշակու-
թային արժեքների և տարբերությունների նկատմամբ:

**4. Կանխել մշակութային բախումները և խրախուսել հարմարվո-
ղականությունը**, ինչը նշանակում է ուսանողներին սովորեցնել, թե ինչպես
կանխել սխալ հասկացողություններից կամ տարբեր մշակութային մոտե-
ցումներից առաջացող խնդիրները՝ նախընտրելով համագործակցային և
հանդուրժողական մոտեցումներ:

**5. Զարգացնել միջմշակութային միջավայրում համագործակցության
հմտություններ**, որպեսզի ուսանողները կարողանան արդյունավետ աշխա-
տել միջազգային թիմերում և համատեղ նախագծերում՝ ապահովելով փո-
խադարձ վստահության, պատասխանատվության և արդյունավետ թիմային
աշխատանքի հիմք:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ դասընթացը նպատակ ունի
ձևավորելու այնպիսի գիտելիքներ և կարողություններ, ինչպիսիք կօգնեն
ուսանողներին դառնալ բաց, ձկուն և հարմարվող մասնագետներ՝ պատ-
րաստ բազմամշակութային աշխարհի մարտահրավերներին:

Ինչպես արդեն նշել ենք՝ «միջմշակութային հաղորդակցություն» առար-
կայի դասավանդման գործընթացը պահանջում է բազմաբնույթ և ձկուն մե-
թոդաբանական մոտեցում, որը համատեղում է թե՛ դասավանդման ավան-
դական, թե՛ ժամանակակից ու ինտերակտիվ մի շարք մեթոդներ: Ժամանա-
կակից կրթական մոտեցումները փաստում են, որ միայն տեղեկատվության
փոխանցումը բավարար չէ միջմշակութային հաղորդակցական հմտություն-
ների ձևավորման համար. անհրաժեշտ է ստեղծել այնպիսի ուսումնական
միջավայր, որտեղ ուսանողները հնարավորություն կունենան կիրառելու
իրենց գիտելիքները գործնական իրավիճակներում և մշակութային փոխ-
գործակցության համատեքստում (Bennett, 2013, էջ 129):

1. Ինչպես ցույց է տալիս մեր փորձը՝ դասավանդման գործընթացում
ամենաարդյունավետ մեթոդներից են **ինտերակտիվ դասախոսություննե-
րը**, որոնք խթանում են ուսանողների ներգրավվածությունը՝ տեսական նյու-
թի ներկայացումը համադրելով քննարկումների, հարց ու պատասխանների
և մտքերի փոխանակման հետ: Առաջարկվում է դասախոսությունները ներ-
կայացնել տեսանյութերով, սահիկաշարերով և հյուրընկալված բանախոս-
ների մասնակցությամբ, որոնք հնարավորություն են տալիս ուսանողներին
ծանոթանալու տարբեր փորձառությունների և մշակութային իրավիճակների՝
իրական օրինակների միջոցով (Deardorff, 2009, էջ 24): Այս մեթոդը կարելի
է կիրառել տարբեր թեմաների ուսումնասիրության ժամանակ, ինչպես օրի-
նակ՝ հաղորդակցական կադապարների, հաղորդակցական խոչընդոտների
կամ առհասարակ միջմշակութային հաղորդակցության սահմանման մասին
դասախոսություններն են:

2. Գործնական հմտությունների զարգացման նպատակով կարևոր տեղ
է զբաղեցնում **դերախաղերի** (role-play) կիրառումը: Դերախաղերը օգնում
են ուսանողներին մոդելավորել կոնկրետ հաղորդակցական իրավիճակներ,

տեղավորվել այլ մշակույթի ներկայացուցչի դերում և հասկանալ տարբեր տեսանկյուններ: Ավելին, կոնֆլիկտային իրավիճակների խաղարկումը, մասնավորապես մշակույթների միջև առկա տարբերությունների հիման վրա առաջացած անհամաձայնությունների օրինակը, ուսանողներին սովորեցնում է գտնել համագործակցային լուծումներ և հարթել մշակութային բախումները: Դասընթացի ժամանակ դերախաղերի կիրառումը կարող է հատկապես օգտակար լինել տարիքային մշակութային տարբերությունների ընկալման զարգացման համար: Օրինակ՝ դերախաղի ընթացքում ուսանողները կարող են մոդելավորել իրավիճակ, որտեղ հայաստանյան համատեքստում երիտասարդ մասնակիցը դիմում է ավագ գործընկերոջը՝ օգտագործելով հարգանքի ձևեր, օրինակ՝ «Տիկին Անահիտ» կամ «Պարոն Սահակ», մինչդեռ անգլերեն միջավայրում սովորական կլինի պարզապես ասել «Anahit» կամ «Sahak», առանց սոցիալական հիերարխիայի ուժեղ ընդգծման:

3. Ուսումնական գործընթացում լայն տարածում ունի նաև **իրական դեպքերի վերլուծության** (case studies) մեթոդը, որը զարգացնում է վերլուծական մտածողությունը, որոշումներ կայացնելու հմտությունները և մշակութային համատեքստում խնդիրները դիտարկելու կարողությունը (Spencer-Oatey & Franklin, 2009, էջ 66):

4. **Խմբային աշխատանքը** ևս արդյունավետ մեթոդ է, որը նպաստում է ուսանողների համագործակցային կարողությունների զարգացմանը: Խմբերում իրականացվող քննարկումները, նախագծային աշխատանքները և համագործակցային վարժությունները հնարավորություն են տալիս ուսանողներին փոխանակվելու իրենց մշակութային փորձառություններով և սովորելու միմյանցից: Խմբային քննարկումների ընթացքում ուսանողները կարող են վերլուծել վարքային տարբերություններ. օրինակ՝ հայկական մշակույթում տարեց մարդկանց հետ զրույցում սովորաբար պահպանվում է պաշտոնական և հարգալից տոն, իսկ անգլերեն միջավայրում հաճախ գերակշռում է համեմատաբար անհատական և հավասարեցված շփման ոճը: Այսպիսի վարժությունները ուսանողներին սովորեցնում են բացահայտել տարիքային տարբերությունների լեզվական (օր. «մեծարգո», «elderly», «senior citizen») և վարքային (օր. կանգնել ավագի ներկայությամբ կամ անմիջականորեն հարց տալ առանց պաշտոնական ձևերի) արտահայտությունները, համեմատել դրանք տարբեր մշակույթների օրինակներով և հարմարվել շփման համապատասխան կանոններին: Սա մեծացնում է միջմշակութային հաղորդակցման արդյունավետությունը և նպաստում մասնագիտական միջավայրում բազմազգ թիմերում աշխատանքի պատրաստվածությանը:

5. Դասընթացը կարող է ներառել նաև **արտալսարանային գործունեություն**, ինչպիսիք են մշակութային միջոցառումները, թանգարանների կամ մշակութային կենտրոնների այցելությունները, երկխոսության և մշակութային փոխանակման երեկոները: Այսպիսի փորձառությունները ուսանողներին հնարավորություն են տալիս անմիջականորեն շփվելու տարբեր մշակույթների կրողների հետ և կիրառելու իրենց սովորած հաղորդակցական հմտությունները իրական միջավայրում (Jackson, 2014, էջ 75):

Մեթոդական այս բազմազանությունը նպաստում է ուսանողների հետաքրքրվածության բարձրացմանը և գիտելիքների գործնական կիրառման կարողությունների զարգացմանը: Այս համատեքստում պետք է նաև նշել, որ միջմշակութային հաղորդակցության ուսուցման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է լսարանային միջավայրի կազմակերպմամբ: Ուսուցման հաջողությունը հնարավոր չէ պատկերացնել առանց այնպիսի ներառական և հարգալից կրթական միջավայրի, որտեղ ուսանողներն իրենց ապահով և ընդունված կզգան՝ անկախ իրենց մշակութային պատկանելությունից: Նման մթնոլորտի ձևավորումը կարևոր նախապայման է ոչ միայն տեսական գիտելիքների յուրացման, այլև հաղորդակցական և միջմշակութային հմտությունների զարգացման համար (Byram, 1997, էջ 98):

Ուսուցչի հիմնական դերը նման միջավայրում բաց, վստահելի և հարգալից մթնոլորտ ստեղծելն է, որտեղ խրախուսվում են բազմազան տեսակետներն ու մտքերը: Սա հնարավորություն է տալիս ուսանողներին բացահայտելու իրենց սեփական մշակույթը, համեմատելու այն ուրիշների մշակույթների հետ և զարգացնելու այն գիտակցությունը, որ մշակութային տարբերությունը ոչ թե խոչընդոտ է, այլ արժեքավոր ռեսուրս: Հատկապես կարևոր է խրախուսել ուսանողներին կիսվել իրենց անձնական փորձառությամբ, ավանդույթներով, պատմություններով և առօրյա գործելակերպով, ինչը հարստացնում է ուսումնական փորձառությունը բոլորի համար: Ինչպես նշում է Տեր-Մինասովան, մշակույթի ուսուցումն անհնար է առանց լեզվի և մշակութային ինքնագիտակցության սերտ կապի (Тер-Минасова, 2000, էջ 131):

Ուսուցման այսպիսի կազմակերպումը հնարավորություն է տալիս ձևավորելու ոչ միայն ակադեմիական, այլև սոցիալական կապեր ուսանողների միջև, ինչը կարող է շարունակվել նաև լսարանից դուրս՝ նպաստելով իրականում բազմամշակութային կրթական միջավայրի կայացմանը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների համար միջազգային փորձի փոխանակման ծրագրերը ևս կարող են դառնալ կարևոր հարթակ միջմշակութային հաղորդակցական հմտությունների զարգացման համար: Բուհերը կարող են համագործակցել արտասահմանյան համալսարանների, միջազգային կրթական կազմակերպությունների և տարբեր ծրագրերի հետ՝ համատեղ ստեղծելով ուսումնական հարթակներ, որտեղ ուսանողները հնարավորություն կունենան շփվելու տարբեր մշակույթների ներկայացուցիչների հետ և կիրառելու իրենց հաղորդակցական հմտությունները բազմամշակութային իրական միջավայրում:

Առցանց փոխանակման նախագծերը, օրինակ՝ վիրտուալ համագործակցային ծրագրերը կամ միջհամալսարանական առցանց դասընթացները, թույլ են տալիս ուսանողներին ներգրավվելու միջազգային շփումների մեջ՝ առանց աշխարհագրական տեղաշարժի: Սա հատկապես կարևոր է ժամանակակից թվային աշխարհում, որտեղ համաշխարհային կրթական միջավայրը դարձել է ավելի հասանելի ու բաց (O'Dowd, 2018, էջ 43): Զուգակցված դասախոսություններն ու սեմինարները, որտեղ դասախոսներն ու ուսանողները միաժամանակ ներկայացնում են տարբեր երկրներ, հնարավորություն են տալիս

համեմատելու գիտելիքների, մոտեցումների և մշակութային ընկալումների տարբերությունները:

Բուհերը կարող են նաև ակտիվորեն ներգրավվել **Erasmus+**, **DAAD**, **Fulbright** և այլ միջազգային կրթական ծրագրերում, որոնք ոչ միայն խթանում են ուսանողների և դասախոսների փոխանակումը, այլև նպաստում են հետազոտական համագործակցությանը: Այս ծրագրերն աջակցում են ուսանողներին սովորել, ուսումնասիրել և կիսվել իրենց մշակույթներով՝ ձևավորելով միջմշակութային գիտակցության բարձր մակարդակ: Ինչպես նշում է Դեարդորֆը, նման փորձառությունները խթանում են միջմշակութային կարողությունների խորքային զարգացումը, քանի որ ուսանողները բախվում են իրական մշակութային տարբերություններին և ստիպված են հարմարվել նոր միջավայրին (Deardorff, 2009, էջ 35):

Հետևաբար, միջազգային փորձի փոխանակման նախաձեռնությունները ոչ միայն հարստացնում են ուսումնական գործընթացը, այլև պատրաստում են ուսանողներին աշխատելու գլոբալացված և բազմամշակութային աշխարհում՝ ձևավորելով բազմակողմանի, ճկուն ու հմուտ մասնագետներ:

Եզրակացություն

Այսպիսով, ժամանակակից կրթությունը չի կարող անտեսել մշակութային բազմազանության նշանակությունը մասնագիտական և հասարակական միջավայրում արդյունավետ գործելու համար: Հոդվածում ներկայացված դիտարկումները ցույց են տալիս, որ «Միջմշակութային հաղորդակցություն» առարկայի արդյունավետ դասավանդումը բարձրագույն կրթության համակարգում պահանջում է բազմաբնույթ և ինտերակտիվ մեթոդների համադրություն: Դասավանդման գործընթացում կարևոր է ոչ միայն տեսական գիտելիքների փոխանցումը, այլև ուսանողների հմտությունների զարգացումը գործնական վարժությունների, դերախաղերի, խմբային քննարկումների և միջազգային փոխանակման միջոցով: Հատուկ ուշադրություն դարձնելով լեզվաբանական ու մշակութային տարբերություններին, այդ թվում՝ տարիքային հասկացողության առանձնահատկություններին, հնարավոր է ձևավորել հարգալից և ներառական ուսումնական միջավայր, որտեղ ուսանողները սովորում են ըմբռնել, գնահատել և արդյունավետ հաղորդակցվել տարբեր մշակույթների կրողների հետ՝ որդեգրելով պատասխանատու և բաց մտածողություն: Տեսական հիմքերի և միջազգային փորձի համատեղ կիրառումը հնարավորություն է տալիս մշակելու արդյունավետ մեթոդաբանություն, որը համադրում է ինչպես լեզվաբանական, այնպես էլ հոգեբանական ու սոցիալ-մշակութային բաղադրիչները: Այս մոտեցումը նպաստում է ուսանողների հաղորդակցական հմտությունների ընդլայնմանը, նրանց պատրաստելով գլոբալացված աշխարհի մարտահրավերներին:

Օգտագործված գրականության ցանկ

- Тер-Минасова, С. Г. (2000). *Язык и межкультурная коммуникация*. Москва: Слово.
- Bennett, M. J. (2013). *Basic concepts of intercultural communication: Paradigms, principles, and practices* (2nd ed.). Intercultural Press.
- Byram, M. (1997). *Teaching and Assessing Intercultural Communicative Competence*. Multilingual Matters.
- Deardorff, D. K. (2006). Identification and assessment of intercultural competence as a student outcome of internationalization. *Journal of Studies in International Education*, 10(3), 241–266.
- Deardorff, D. K. (2009). *The SAGE Handbook of Intercultural Competence*. SAGE Publications.
- INCA Project Team. (2006). *Intercultural Competence Assessment – INCA Project: Final Report*. Leonardo da Vinci Programme, European Commission.
- Jackson, J. (2014). *Introducing Language and Intercultural Communication*. Routledge.
- O'Dowd, R. (2018). Telecollaboration and Virtual Exchange Across Disciplines: In *Service of Social Inclusion and Global Citizenship*. Research-publishing.net.
- Spencer-Oatey, H., & Franklin, P. (2009). *Intercultural Interaction: A Multidisciplinary Approach to Intercultural Communication*. Palgrave Macmillan.

Мариам Адамян

*Преподаватель ереванского государственного университета
имени В. Я. Брюсова, кандидат филологических наук
Эл. адрес: mariam@leadavenue.com*

**ПРИМЕНЕНИЕ СОВРЕМЕННЫХ МЕТОДОВ В ПРЕПОДАВАНИИ
ВУЗОВСКОЙ ДИСЦИПЛИНЫ «МЕЖКУЛЬТУРНАЯ
КОММУНИКАЦИЯ»**

Статья посвящена методологическим основам и практическим подходам к преподаванию дисциплины *Межкультурная коммуникация* в высшей школе. В условиях глобализации и культурного многообразия развитие межкультурной компетенции студентов становится необходимым условием их личностного, академического и профессионального становления. В работе представлены эффективные модели обучения, подчеркнута важность создания инклюзивной и уважительной образовательной среды, а также рассмотрена роль международных программ обмена в формировании культурной осведомленности и коммуникативных навыков. Предложенные стратегии способствуют подготовке студентов к успешному сотрудничеству в мультикультурных средах, развивая толерантность, адаптивность и взаимопонимание.

Ключевые слова: Межкультурная коммуникация, высшее образование, межкультурная компетенция, методика преподавания, культурное разнообразие, инклюзивная среда, международный обмен, адаптивность, толерантность.

Mariam Adamyan

lecturer at Yerevan Brusov State University,

Ph.D. in Philology

Email: mariam@leadavenue.com

THE APPLICATION OF CONTEMPORARY TEACHING METHODS IN THE UNIVERSITY COURSE “INTERCULTURAL COMMUNICATION”

This article addresses the methodological foundations and practical approaches to teaching *Intercultural Communication* in higher education. In an era of globalization and cultural diversity, developing students' intercultural competence is essential for their personal, academic, and professional growth. The paper presents effective teaching models, emphasizes the creation of an inclusive and respectful learning environment, and explores the role of international exchange programs in enhancing cultural awareness and communication skills. The proposed strategies aim to prepare students to collaborate successfully in multicultural contexts, fostering tolerance, adaptability, and mutual understanding.

Key words: Intercultural communication, higher education, intercultural competence, teaching methods, cultural diversity, inclusive learning, international exchange, adaptability, tolerance.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. օգոստոսի 23-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. սեպտեմբերի 18-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. դեկտեմբերի 19-ին: